ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԸ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐ

«Ո՜վ բարեխնամ և ամենակալ Աստված՝ Հայր մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի, այստեղ ներկա մանուկները Քեզ են խոնարհեցնում իրենց գլուխները: Աղաչում ենք Քեզ, երկարիր աներևույթ Աջդ և օրհնիր այս մանուկներին...»:

Սուրբ Պատարագի արարողությանը զուգընթաց, օրհնության այս խոսքերն էին հնչում Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցիներում Ծաղկազարդի տոնին, որն այս տարի առանձնակի շուքով տոնախմբվեց: Հոգևոր դասի որոշմամբ և այսուհետ ավանդույթ դարձնելու մտածումով Ծաղկազարդը թեմում հայտարարվել է Մանուկների օրհնության օր:

Նորաբողբոջ ճյուղերն ու բազմերանգ ծաղիկները ձեռքներին՝ եկեղեցիները շրջապատած մանուկների առատությունից գարնան ամպշող օրն առավել լուսավոր էր թվում, արևն՝ առավել տաք: Մանուկ հայացքների մաքրությունն էր կուտակվել եկեղեցիներից ներս ու դուրս՝ օրհնության, փառաբանության, աղոթքի մրմունջով բարձրանալով դեպի երկինք և ներդաշնակություն բերելով մեր հոգսաշատ առօրյային:

Օրվա մեջ եկեղեցիներ այցելող մեծերի և երեխաների հոսքն այնպիսին էր, որ Հայրապետական թեմի հոգևորականները՝ Առաջնորդական Փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ, վաղ առավոտից մինչև ուշ երեկո շրջում էին հավաքված ժողովրդի մեջ, օրհնում մանուկներին, զրուցում մարդկանց հետ: Մանուկներին բաժանվեցին նաև տոնական օրվա համար նախապատրաստված աղոթագրքեր: 2000-ամյա հեռավորությունից կարծես ամենուր արձագանքում էր Տիրոջ խոսքը՝ «Թույլ տվեք այդ մանուկներին, որ ինձ մոտ գան...»: Ծաղկազարդը Թեմում վերածվեց համաժողովրդական տոնակատարության, մեկ նախաձեռնությամբ ևս ետ շրջելով ժամանակի՝ աստվածամերժ ընթացքով գլորված անիվը և մեկ քայլ ևս մոտեցնելով մեզ մեր

հայրերի հավատին, այն ժամանակներին, երբ «մինչ Նա առաջանում էր, մարդիկ իրենց զգեստները փռում էին ճանապարհի վրա»:

Արարատյան Հայրապետական թեմում այսպես կյանքի կոչվեց Մանուկների օրհնության օրը, որպես հոգևոր վերարթնության ևս մեկ դրսևորում՝ համալրելով Սրբազան Հոր մյուս մտահղացումների շարքը: Ավելացնենք, որ Սուրբ Սարգսի տոնին թեմում կատարվում է երիտասարդների օրհնութուն, Տյառնընդառաջին՝ նորապսակների, Ավետման տոնին՝ մայրության բերկրանքին սպասողների, ուսումնական տարվա ավարտին՝ շրջանավարտների օրհնություն: Մնում է ավելացնել նաև, որ եկեղեցական-ազգային տոների խորհուրդները թեմում սպասավորող հոգևորականների ջանքերով լուսաբանվում են հանրապետական մամուլում և թեմի «Շողակաթ» հեռուստաստուդիայի միջոցով՝ ապահովելով տոնակատարությունների ժողովրդականացումը:

Մանլո դիվան Արարատյան
Հայրապետական Թեմի